

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դուռն յոտուկ շրջաբերական-
նաւ մը դաւառաց կուտակներն հը-
րաւ իրեց որ յաւաքիկայ նոյն Դին բաց-
ւելիք Օսմ. Երեսփոխանական ժողո-
վոյ անդամոց ընտրութիւնները կա-
տարել տան ըստ հաստատեալ կանո-
նադրութեան:

Գաւառներն 107 երեսփոխան պի-
տի ընտրեն, 60 ը իսլամ, և 47 ոչ-
իսլամ:

Նոյն շրջաբերականը զրկուեցու-
նաւ Կ.Պօլսոյ քաղաքապետութեան,
մայրաքաղաքէն ընտրուելիք 10 ե-
րեսփոխանաց համար:

Կը յուսանք որ մեր գաւառաբը-
նակ աղագայինք իրենց ընտրական ի-
րաւունքը խոհուն դատողութեամբ
և համաձայնութեամբ 'ի դուրձ դնե-
լով' կը յաջողին խարաճեան Դանիէի,
Պալարեան համադասակ, Դարաճեան
Մանուկ, Շահինեան Յակոբ և Գրի-
գորեան Ռուբէն էֆէնդիներու պէս
խօսող, խորհրդածող, հմուտ ու աղ-
գասէր անձինք ընտրել, և ոչ թէ
Պալարեան Երեսփոխանին և Ատոնայի
Պատիկեանին պէս անձինք, որք ի-
րենց մշտնջենային լուսթեամբ մի-
այն փայլեցան երեսփոխանական ժո-
ղովոյն մէջ:

Նախորդ Սէրտար-էքրէմն և այլ
քանի մը բարձրաստիճան հրամանա-
տարներ դատելու պաշտօն ունեցող
պատերազմական ատենին անդամ
ներն այլ և այլ պաշտամանց կոչու-
հարկէն յառաջ եկած անընդհատ
փոփոխութեանց պատճառաւ՝ վեհ-
Սուլթանն հրաման քրաւ, որ ամ-
բաստաներոց գատաստանը պատե-
րազմէն ետքի թողուի, և իրենք ալ
Լեմնոս կղզին զրկուին:

Սոյն որոշման համեմատ՝ Ապտիւլ
փէրիմ փաշան, Բէտիֆ փաշան, Ըն-
քոտար: Գորայ հրամանատար Մահ-
մուտ փաշան, Չիլիթիայի հրամանա-
տար Ահմէտ Համիտ փաշան, Թրի-
փայի հրամանատար Սաֆֆէթ փաշան
և Շիպկայի հրամանատար Ահմէտ
խուլսի փաշան երեկ արքունական
Սիւրէյա չոգենաւով Լեմնոս կղզին
տարուեցան, ուր սրգելեալ պիտի
մնան մինչև պատերազմին վախճանը:

Կ. Պօլսոյ իսլամ ժողովրդէն կազ-
մուած կայսերական լէգէոնին (Մէլ-
քէյի Հիւմայուն) նորակազմ վաշտե-
րն երկու օրէ 'ի վեր նուագարան-
ներով ելլող թէֆէնդիներն առջև եր-
թալով՝ վեհ. Սուլթանին կը ներկա-
յանան:

Սուլթան Պայազիտի հրապարակին
մէջ Միւստֆիքիանէն, ուր հայրենա-
սիրական նուէրներ հաւաքող յանձ-
նաժողովը կը գումարուէր, հիւան-
դանոցի փոխուելով, յիշեալ յանձ-
նաժողովն ալ երկուսոց պաշտօնատան
Թահսիլթի բաժնին յարկերէն միոյն
մէջ պիտի գումարի:

Մայրաքաղաքիս Աւստրիական
գետապետ Չիլի կոմսն այս գիշեր կո-
չուք մը տուաւ 'ի պատիւ արտաքին
գործոց նախարար վահմ. Սէրվէր
փաշային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
24 օգոստ. չորեքշաբթի իրիկուն	10.15		
25 օգոստ. հինգշաբթի առաւօտ			
բացուեցաւ	10.15		
ժամ 6 ին	10.45		
Բուսիլի երկաթուղի	Ֆր.	27 75	
Թղթաղար	Լիւ.	179 1/2	
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵՐՈՅ			
Կ. Պօլսոյ 24 օգոստոս			
Սօսիթէ յենկրալի բաժ. Անգլ. Լիւ.	3, 5		
• Գոյառակութեան	1, 25		
Կ. Պօլսոյ Պաշտօնային	2, 28		
Քրէտի Դէպքով	2,		
Քրէտի (Կրթութեան) Թիւրք	—		
Փոխ.	1863	Ֆր.	53
•	1865	•	53
•	1869	•	49 20
•	1872	•	47
•	1873	•	48
Թրամուայ	Օսմ. Լիւ.	1	7

Ա. Չ. Ա. ՅԻՆ

Կը լուսնը թէ Պատրիարքական
փոխանորդ Գեր. Տ. Յ. Մկրեան,
Աղգ. ժողովոյ վեհ. ուրբաթ ա-

ւուր նստին մէջ փոխադեան Սա-
փան էֆէնդիի ապօրէն և թշնամու-
նալի վարմունքէն ծանրապէս վի-
րաւորուելով հրաժարական մատու-
ցել է Ս. Պատրիարքին, դատաստան
և քննութիւն միտնգամայն պահան-
ջելով, բայց 'ի Սրբազնութիւնը չէ
ընդունել' պատասխանելով թէ ա-
ռանց օրինաւոր ամբաստանութեան
և օրինական քննութեան չկրնար
աղգային պաշտօնեայ մ'ամբաստան-
եալ համարիլ, ոչ ալ նորա հրաժա-
րականն ընդունիլ, մանաւանդ քա-
նի որ ինքը կատարեալ վստահութիւն
ունի անոր վրայ:

Ս. Պատրիարք հայրն իրաւունք
ունի այսպէս վարուելու, որովհետեւ
մինչև ցարդ Տ. Յ. Մկրեանի գէմ որ
և է գանգաւ կամ բողոք ներկայա-
ցած չէ Ս. Պատրիարքին կամ վար-
չութեան. ընդհակառակն՝ յիշեալ
Գեր. եկեղեցականն եօթն տարիէ
'ի վեր ամենայն արժանաւորութեամբ
իւր պաշտօնը վարած և կարևոր
ծառայութիւններ աղգին մատուցած
է, ինչպէս որ նոյն իսկ Ս. Պատրիարք
հայրն ալ հրապարակաւ վկայեց:

Մեր և ամեն ողջաբնէ աղգայ-
նոց այս համարման աւելի հաստա-
տութիւն տուող ապացոյց մ'ալ ու
է, որ Տ. Յ. Մկրեանի գէմ՝ այսպէս
յախուռն և ապօրէն կերպիւ յար-
ձակում ընդունելու Ղալաթիոյ հոգա-
կաւոր խմբակին պաշտօնականներն
փախուցան և Գրիգորիոս, որք
իրենց կրկն ու շահուն չյառաջող
ամենէն արժանաւոր եկեղեցական-
ներն այսպէս վատահամբաւելով
պաշտօնանկ ընելու սովորած են ար-
դէն քանի՝ քանի՝ փորձերով: Բայց
չենք յուսար որ այս անգամ ալ աղ-
գին մէջ աղմուկ ու խռովութիւն
հանելով կարենան իրենց նպատակին
հասնիլ:

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

• • • Խմբագիր •
Առաջին. Գիտենք թէ վենետիկի
Միխիթարեան միաբանութեան նորըն-
տիր Աբբան Հոռմ գնացած էր եպիս-
կոպոս ձեռնադրուելու և ձեռնու-
նայն ետ դարձած: Պատճառ, զի
չէր ուղած, ինչպէս հաւատարիմ աղ-
բիւրէ իմացած ենք, Մուրատեան
վարժարանը Ս. Պապին յանձնել 'ի
փոխարէն եպիսկոպոսական աստի-
ճանի:

Երկրորդ. Գիտենք նոյնպէս թէ
Աբբահայրը քանի մը ժամանակ յե-
տոյ դարձեալ Գնաց (կանչուելով թէ
ինքնայորդոր կամք չենք գիտեր)
'ի Հոռմ' և եպիսկոպոսութիւն ստա-
ցաւ: Ո՞վ արդեօք զիջում ըրաւ. Ս.
Պապը, թէ Աբբահայրը. այսինքն
Ս. Պապը Աբբահօր եպիսկոպոսու-
թիւն տուաւ՝ առանց Մուրատեան
վարժարանին իրեն ծագող առնելու
թէ Աբբահայրը եպիսկոպոսութիւն
առաւ՝ Մուրատեան վարժարանը Ս.
Պապին ժամուց տալով:

Երրորդ. Գիտենք դարձեալ թէ
նոյն միջոցները Միխիթարեան միա-
բանութիւնը Մուրատեան վարժա-
րանի չէնք որ 'ի փարիզ' վաճառե-
լու ելեր էր, և մեր Ս. Պատրիարքն
'ի ձեռն Բ. Գրան արգելք եղեր էր
անոր վաճառմանը, և Միխիթարեան
միաբանութեանն բացատրութիւն
ստացած էր թէ միաբանութեան նը-
պատակն յիշեալ վարժարանը իսպառ-
խափանել չէ, այլ աւելի արգիւնա-
ւոր վիճակի մէջ գնելով շարունա-
կել, և այլն: Ս. Պատրիարքն ալ սոյն
բացատրութեանն գոհ ըլլալով՝ վա-
ճառման արգելքը վերցնել տուեր
էր:

Չորրորդ. Գիտենք թէ Մուրատ-
եան վարժարանն 'ի Հոռմ' փոխադրե-

լու գիտաւորութիւնը նոր չէ, այլ
Հիւրմիւզեան Գերապայքաւոր արքա-
յութեան ժամանակէն յղացուած է:
Նամակիս առջի պարբերութեանն
տեսնեք որ Ս. Պապն զՄուրատեան
վարժարանն իւր ալին անցունելու
գիտաւորութեանն չէ հրաժարած, և
Միխիթարեան միաբանութեան Սըր-
բաղան Պատրիարքին տուած բացատ-
րութիւնը բաւական չէ ապահովել ըզ-
մեզ թէ ինք ալ իսպառ հրաժարած
է նոյն գիտաւորութեանն:

Արդ՝ մենք չենք ուզեր ըսել թէ
Ս. Պապն և Միխիթարեան միաբանու-
թիւնն իրաւունք ունին Մուրատեան
վարժարանն ըստ հաճոյից կամաց իւր-
եանց առնել քաշել. մենք գիտենք և
առաջին առթիւ պիտի հաստատենք
իսկ հրապարակաւ թէ Մուրատեան
վարժարանին տէրը Հայոց աղգն է,
և թէ Միխիթարեան միաբանութիւնն
իր պաշտաման մէջ կոտակադրին կա-
մանց անհաւատարիմ գործունէրով՝ ծա-
նըր պատասխանատուութեան տակ
ընկած է: Բայց այսու ամենայնիւ
տարապարտ կնիքներու առջև առ-
նելու և ինքիւն յօգուտ աղգին և
միանգամայն Միխիթարեան միաբա-
նութեան, որուն մատուցած ծառա-
յութիւնները չենք կրնար ուրանալ,
լուծել կարենալու համար՝ պէտք է
որ Հայոց Ս. Պատրիարքը գոհ չըլլայ
միայն Միաբանութեան կողմէն ի-
րեն տրուած բացատրութեամբ, այլ
անոր վրայ հիշուելով Մուրատեան վարժա-
րանի նշաններն և մարտիրոսներն իւր-
եանց օգնութեամբ հաշտեալ անյայտ:

Յուսարով, • • • Խմբագիր, որ
չէք զանար այս քանի մի տողս Ձեր
թերթին մէջ զետեղել, ինչդրեմ ըն-
դունիլ հաճեցէք խորին յորդանաց
հաւատարմը:
24 օգոստոս 1877 * * *
Կ. Պօլսոս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԿԱՆԻ

Օրհնագիր. — 1. Պէտքէ. — 2. Բնաբա-
րութեան. — 3. Խորհրդէն ինքնին և Աղգ.
ժողովոյ վեհ. Սուլթանը:

Աղնիւ Մասիս •
Ամեն աղգայն ժողովարաններուն մէջ
Պիւտաճի խնդիր մեծ կարեւորութիւն ունի:
Աղգին մը համար ամենէն կարեւոր և
հական բաներէն մին և գրեթէ առաջինը
տնտեսութիւնն է:

Տնտեսութեամբ է որ աղգին մը կա-
րեւոր պէտքերը կրնան հոգացուիլ և վար-
չական անիւր կը գտնուայ անարդի:

Այդ պէտքը՝ մանաւանդ մեզի պէս
բարոյական ոյժ և կի՞ ունեցող աղգին մը
յոյժ կարեւոր է:

Հետեւաբար Պիւտաճի խնդրոյն մէջ ա-
ռաջին բանը ծախսոց չափաւորութիւնն է:
Սակայն ընդարձակ նշանակութիւն
ունեցող խօսք մ'է՛ այս, զոր կողմէն պար-
զել:

Ես անոնց կարծիքէն չեմ որ կուզեն
մեր աղգային պաշտօնականներուն իրենց
արժանիքէն յոյժ նուազ թողակ սահմա-
նել. իմ կարծիքս այն է որ պաշտօնէից
թուոյն մէջ չափաւորութիւն պէտք է մըտ-
ցնել, և վարձանակ մարդու համար գործ-
հայրայնութեան, պաշտօնի համար մարդ
գործածել:

Ուստի կը համաձայնիմ Նոր Դարի նշն
առաջարկութեան, որ Պատրիարքարանի
դիւանատան բարեկարգութեան կը վե-
րաբերի, և զոր Սահմանադրութիւնն ար-
դէն գտած է:

Պաշտօնեայ մը պէտք է սիրել իւր պաշ-
տօնն, ըստ կարեւորն գոհ լինի և աչքը
բնաւ դուրսը չըլլայ, որպէս զի խղճիւ
կատարէ իւր պաշտօնին պարտականու-
թիւններն և զեղծութիւն գործել զգուշա-
նայ:

Բնաւ պաշտօնեայ չգործածելն աւելի
լաւ է կէս անոթի պաշտօնեայ գործա-
ծելէ:

Անական զեղջիւր առաջարկը, զոր
կը ներկայեն ամենք, աւելի կուսպիցա-
կան ողբոյ արդիւնք կը դառնայ, քան թէ
խնայողական միջոց:

Ինչպէս ըսի, պէտքէն աւելի պաշ-
տօնեայ չգործածելուն մէջ է բռն խնա-
յողութիւնը, և արժանաւոր ու գործուն-
եայ Պատրիարքական փոխանորդի մը 1500
դր. ամսականը, զոր խնդրոյ ներքե կու-
զեն ձգել հրապարակաւ, այսպիսի ժա-
մանակի մը մէջ մեծ գումար մը չեմ կար-
ծեր. իսկ այդ կարեւոր պաշտօնը կուսա-
կրօն եկեղեցականի յանձնելու տուաճար-
կութեան մէջ խակութիւն կը տեսնեմ,
և սկզբունք չեմ կրնար հաւանիլ, զի Պատ-
րիարքական փոխանորդը միանգամայն
դատաստանական խորհրդոյ նախագահ է:

Եթէ ամբաստանութիւն կոյ աղգին
փոխանորդին վրայ, այդ ուղի խնդիր է.
Իմ խնդիրս անձի հետ չէ, այլ սկզբան •
Պատր. փոխանորդի խնդրին իւր օրինակ
առաջ բերի՝ և ոչ իւր տաւանին խնդիր:

Մեր պիւտաճի մէջ ապագութիւնն
բաւական ալ կարեւոր տեղ մը բռնած է:

Տպագրութեան պէտքը միշտ կայ •
սակայն գէշ չըլլար եթէ Աղգը կեղծ •
տպարան մ'ունենայ, որմէ կրնայ հետըզ-
հետէ բաւական չափ մ'ալ գոյանալ, եթէ
բարեւ մատակարարուի:

Պիւտաճի մէջ Ուսումն. խորհրդոյ վար-
ժարանայ տեսչի ամսական անունով իւր
դաստիարակութեան յատկացեալ դու-
մար տարին 18000 դր. նշանակուած է:

Կեղծ. անուակին Սահմանադրական
պարտաւորութիւնը միայն վարժարանաց
տեսչի ամսական յատկացելով չէ. դաս-
տիարակութեան ծառայմանն և աղբա-
տիկ վարժարանաց նպատակը պարտա-
ւորութիւն ալ ունի. ուստի կրնեմ թէ
այդ գումարը բաւական չէ, և թէ խնա-
յողութեան զոյացած բոլոր գումարը
պէտք է դաստիարակութեան յատկա-
ցնել:

Կատարելէն ոմանք, թէ դատախա-
րակութեան յատկացեալ գումարը մի-
միայն Ղալաթիոյ Կեղծ. վարժարանին
յատկանայ: Ըստ իմ անփառութիւն է
այդ. վասն զի դատախարակութիւնն ըսե-
լով՝ առանձինն Ղալաթիոյ կեղծ. վար-
ժարանը չեմ հասկնար:

Ղալաթիոյ մէջ Կեղծ. վարժարան մը
բացուելու սկզբունքը կընդունիմ, և ա-
տոր համար գումար մը յատկացնելու ա-
ռաջարկութեան զէմ չեմ ելներ, բայց
այդ վարժարանին ծրագիրը պէտք է դայ
նախ Աղգ. ժողովոյ և տեսուի թէ ինչ
հիման վրայ պիտի ընթանայ, որչափ ա-
շակերտ պիտի պարունակէ, քանին Ղա-
լաթիոյնէն և որչափը մայրաքաղաքիս
թաղերէն և գաւառներէն պիտի լինի,
ինչ ուսումնը և դիտութիւն պիտի աւան-
դուի, ընթացքը քանի՞ տարուան է, տա-
րին որչափ ծախք պիտի ունենայ, ինչ
և որչափ եկամուտ յատկացած է, վե-
րատեսչութիւնը որ պաշտօնական մարմ-
նոյն ենթարկեալ է. ներքին հսկողու-
թեան և պատասխանատուութեանն որ-
պիսի սահման դրուած է և աղգն ինչ և
որչափ իրաւունքներ պիտի ունենայ:

Ատնք գիտնալու արժանի կարեւոր
կէտեր են, և մինչև որ ատնց ամենը
բացատրող լիակատար տեղեկագիր մը չը
ներկայի, Աղգ. ժողովն առանց համոզ-
ման չկրնար գումար մը յատկացնել յիշ-
եալ հաստատութեան:

Ահա կը տեսնուի թէ Ղալաթիոյ խմբ-
րակին ընդդիմադիր կուսակցութիւնն ոչ
թէ Ղալաթիոյ Կեղծութեան վարժարա-
նին բացմանը գէմ է, ինչպէս վրայաբա-
բար կը յայտարարէ յիշեալ խմբակը ժո-
ղովրդականութիւն վստակելու դիտմամբ,
այլ կանոնաւորապէս բացուելուն, և աղ-
գին իրապէս օգտակար ըլլալուն 'ի սրտէ
փափաքով է:

Պիւտաճի մէջ Վանօրէից խորհրդոյ
յատկացեալ գումարը ներկայ պարտա-
յից տեսութեամբ զանց ընելու առաջարկ
ներկայացած է:

Ես ընդհակառակին կը պնդեմ թէ ներ-
կայ պարտաւորաց մէջ Վանօրէից բարե-
կարգութեան և նոյալ գոյից պահպանու-
թեան համար պաշտօնական վիճակազ-
րի մը պէտքն յոյժ զգալի է:

Աս պիտի ասոնք են Կեղծ. պիւտաճի
նկատմամբ ունեցած դիտողութիւնքս:

Մասիս 2011 թուով հրատարակած
յօդուածոյս ամօթ ինքզինք ձգտալով:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ
Ք Մարտի 1-ին, Հունիսի 1-ին և 1-ին հասարակ
Ուղևորութիւն յամին 1876
Արշակայ Մ. Աթուհեան
Ամեն հայ գրաւորականաց քով կը
գտնուի: Գին 3 քառորդ թղթագրով:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԻՆ ՍԵՐԱՍԻՈՅ
Եւ անոր կուսակալութեան ներքեւ դրոշմ
նուազ մէկ քանի զիտաւոր քաղաքաց
Գրեաց Պոստ Ժամանակ Նախնեան
Ամեն հայ գրաւորականաց քով կը
գտնուի: Գին 1 1/2 քրանք:


ԲԻՆԱ ԼԱՍՈՑ
Օղերուն ջերմութեան ժամանակ
Բինա Լաւաշի Էլեքտրիկ ջրայ հետ
խառնելով ստանալիս և աղեաց ուժ
կուտայ զովացնելով, մինչդեռ խմոր
եղալ հեղուկներն ու շուրուպները կը
տկարացնեն՝ առանց ծարաւն անցու
նելու:
Ամեն գրաւորականաց քով կը գտնուի:



ՍՈՒԹԻՆԻ ՇԻՊՈՐ
Ժայռին է որ երախայք ծնաներէն
մինչ երեք տարեկան հասակը գրեթէ
թէ շարունակ փորի ցաւ: Կտրհարու
թիւն, ստամոքսի անհանգստութիւն,
անքուն մնալ, չղային գրգռութիւն
և այլն կուսնեն, մանաւանդ ակուս
հանելու միջոցին, և այս ներգործիւն
ներն ալ աւելի կը սաստկանան ամառ
ւան տաք եղանակին: Սուժինի Շի
րորը վերջիշեալ դժուարութեանց ա
մենուն ալ առաջը կառնէ ու կը բը
ժըլկէ, որով երախան կը հանգչի ու
կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր
ծնողաց: Գործածողները շատ դժ
են: Ուղղող կրնայ փորձել: Գինն ա
ժան է: Նորածին երախայից կաթի
նով կը տրուի, վեց ամիսէն վեր եղ
ղին օրը երեք անաչի գրգռ, կը
ժախուի և Պոլիս Ղալաթիա Մինաս
եան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:



ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ
Փոքր ավանձերս կոչուած ձեռ
քով դարձող ու անքակ կար կարող
գործիքը ամեն տեսակ կար մեծ դի
րութեամբ կը կարէ ու գինն ալ ա
ժան է, երախան օրով մը կը տր
ւի, աւուրածները կը շակուի ու կա
րել չդիտողին դաս կը տրուի: Կը
ժախուի և Պոլիս Ղալաթիա Մինաս
եան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ ՇՈՒԹԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ 1877 ՕԴՈՍՏՈՍ 1 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐԷՆ ՄԿՍԵԱԼ ՄԻՆՁԵՆ ՕԴՈՍՏՈՍ 131 ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒԹԵՆԱԽՆԵՐԸ

Ժամ	Երախայի Եղբայր	Թի-
11 45	Ենիմահալէն Մէղարայ, Պէյլեքտէն, Թարապիւս, 34	
12 45	Ենիմահալէն Մէղարայ, Պէյլեքտէն, Թարապիւս, 32	
2	Ենիմահալէն Մէղարայ, Պէյլեքտէն, Թարապիւս, 23	
3 45	Մէղարայ, Պէյլեքտէն, Թարապիւս, 34	
4 45	Ենիմահալէն Պէյլեքտէն, Թարապիւս, 25	
6 45	Ենիմահալէն Պէյլեքտէն, Թարապիւս, 4	
8	Ենիմահալէն Պէյլեքտէն, Թարապիւս, 23	
10	Մէղարայ, Պէյլեքտէն, Թարապիւս, 22	
Արնալուտէյն Եղբայր		
12	Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 4	
12 35	Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 2	
1	Պէյլեքտէն, Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 22	
1 45	Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 4	
2 25	Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 22	
3 45	Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 2	
40 45	Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 4	
11	Արնալուտէյն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 4	
Արնալուտէյն Եղբայր		
11 45	Պէյլեքտէն, Պէյլեքտէն, Թարապիւս, 33	
12	Պէյլեքտէն, Պէյլեքտէն, Թարապիւս, 4	
12 45	Պէյլեքտէն, Պէյլեքտէն, Թարապիւս, 25	

Այս լրագիրը շաբաթը երեք անգամ
կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբ
թի և շաբաթ օրերը, Բաժանորդագրու
թեան անգինն են Ղալաթիա Մինաս
ճատտէի թիւ 198, Նորո խան Մարտի
խմբագրատունը:

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգա
բարձուաց սենեակները:
ԻՋՄԻՐ. Ստանբուլի աղա Տէմէլեան.
ՆԻԿՈՍԻՒՅԱ. խորովէ քիւրճեան.
ՊՐՈՒՍՏԱ. Ստանբուլի աղա Քանկերեան.
ԹԵՔԵՐԵՍԱՂ. Յովակիմ աղա Ուղուշ
արդեան.
ՏՐԱՊԻՃՈՆ. խաչատուր աղա Մանուկեան.
ԿԱՐԻՆ. Կարապետ աղա Մանուկեան.
ՄԱՐՏ. Մարտի աղա Փօթիկեան.
ԵԱՇ. Մարտի աղա Քանկերեան.
ՅՈՒՐԵՍՏԱՂ. Յովակիմ աղա Ուղուշ
արդեան.
ՍԻՎԵՐԷՆԻՍԱՐ. Սիւրբ. Տ. Սիւրբեան.
ՍԻՎԵՐԷՆԻՍԱՐ. Սիւրբ. Տ. Սիւրբեան.
ՍԻՎԵՐԷՆԻՍԱՐ. Սիւրբ. Տ. Սիւրբեան.
ՍԻՎԵՐԷՆԻՍԱՐ. Սիւրբ. Տ. Սիւրբեան.

ԻՍՏԱՆԲՈՒԼ-ՏԵՐԱՊԻՃՈՆ
Ե. Ս. ԻՍՏԱՆԲՈՒԼ
Ի ՏԵՐԱՊԻՃՈՆ ԽԱՅՐԻԷԻ
ՂԱԼԱԹԻԱ ՆՈՐՈ ԽԱՆ

2	Պէյլեքտէն, Թարապիւս, Գանձ, Պէյլեքտէն, 21
3 30	Պէյլեքտէն, Թարապիւս, Գանձ, Պէյլեքտէն, 33
9	Պէյլեքտէն, Թարապիւս, Գանձ, Պէյլեքտէն, 2
10 25	Պէյլեքտէն, Թարապիւս, Գանձ, Պէյլեքտէն, 24

ԿԱՄԱՐԱՅԻՆ ԵՆՈՂ ՇՈՒԹԵՆԱԽՆԵՐԸ Երախայի Եղբայր

1 40	Գալաթիա, Ենիմահալէն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 4
1 30	Պէյլեքտէն, Օրթաք, Գուրուշ, Արնալուտէյն, 34
3	Պէյլեքտէն, Օրթաք, Պէյլեքտէն, Պէյլեքտէն, 25
4 45	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, Պէյլեքտէն, 23
6 35	Ենիմահալէն, Գուրուշ, Օրթաք, Պէյլեքտէն, 2
8 45	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, Պէյլեքտէն, 22
9 30	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, Պէյլեքտէն, 25
10 45	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, Պէյլեքտէն, 34
10 45	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, Պէյլեքտէն, 32
11 45	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, Պէյլեքտէն, 23

1	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 4
2	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 22
2 35	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 2
9 30	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 4
10 45	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 4
11 40	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 2
11 40	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 1
12	Պէյլեքտէն, Օրթաք, Արնալուտէյն, 4

2	Ենիմահալէն, Պէյլեքտէն, Պէյլեքտէն, 33
9 45	Գուրուշ, Պէյլեքտէն, Պէյլեքտէն, 21
10 30	Գուրուշ, Պէյլեքտէն, Պէյլեքտէն, 33
11 45	Գուրուշ, Պէյլեքտէն, Պէյլեքտէն, 21
11 40	Գուրուշ, Պէյլեքտէն, Պէյլեքտէն, 22

ՆՈՐԹ ԲՐԻՏԻՍ ԳԵՄ ԵՄԵՐԿԱՆԹԻԼ NORTH BRITISH AND MERCANTILE INSURANCE COMPANY ՆՈՐԹ ԲՐԻՏԻՍ ԵՄԵՐԿԱՆԹԻԼ Լոնտոն և Լոնդոնի քաղաքները Ենիմահալէն Պէյլեքտէն

Բաժանորդագրեալ գումար լուր	Բաժանորդագրեալ գումար լուր
2000000	5000000
250000	150000
1040744-1290744	580000-550000
1875ին հրդեհի դուռ հասցիքը	917,178

Ստորագրեալ իրենց բազմաթիւ յաճախողաց և այս քաղաքի
հասարակութեան կը ծանուցանեն որ իրենց վերջին ալ երկու
աշեալ գործակալութեան ընտրութեան մը մէջ կը գտնուին
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ գիւրութիւններ կը
մատուցանեն:
Ապահովութեան կարգադրութեան կը բազմաթիւ երկու
աշեալ գործակալութեան ընտրութեան մը մէջ կը գտնուին
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ գիւրութիւններ կը
մատուցանեն:
Գրեթէ ամեն կարգի փառնաւոր ապահովութեան կը
բերայի Ղալաթիայ և Պոլսի մէջ, նոյնպէս մատուցող
քաղաքները:
Գիններն և սուրճ մատուցող տեղեկութեան համար
պէտք է դիմել Մի
աշեալ գործակալութեան գրասենեակը Ղալաթիայ
Բէլլիմի քաղաքի մօտ Նախնե
իւր թիւ 5:
Ի լրագրի գործակալատար
Ս. Գ. ՍՈՒՄԻՆ